

ԱՅՍ  
ՀԱՄԱՐԻ  
ՀԵՏ ՄՏԱՑԷԸ  
«ՅՈՅՄ»-Ի 2012-Ի  
ՕՐԱՓՈՅՁԸ

Մշակութային և Հասարակական  
Երկշաբաթաթերթ

Հոյս

1200 թուման  
Հայաստանում 320 դրամ



**ՁՄԵՌ ԴԱՊԱԻԿԻ  
ԵՒ ԱՇՈՒՂ  
ՄԱՏՈՒՐՕՂԼՈՒ  
ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ**

«Յոյս»-ի  
 յազդող համարը  
 լոյս է տեսնելու նրբ  
 շաբաթ յետոյ,  
 Յունարի 11-ին:

# ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ 2012 ԹԻՎԿԱՆ

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **ԹՀԹ Առաջնորդ Տեր Մեայուհ Արք. Սարգսեանի ջնորհաւորական ուղերձը Ս. Ծննդի եւ Ամանօրի առիթով**
- 4 **Իրանահայ համայնքը 2011-ին Ռոբերթ Սաֆարեան**
- 10 **Կլոր Սեղան հայ մամուլի մասին (ք. մաս)**
- 13 **«Հայելի»-ն կորցրել է փայլը Լեւոն Ահարոնեան**
- 15 **Ն. Զուղայի թատրոնի պատմութիւնից՝ «Համվար» թատերախումբ Նիկիտ Միրզայեան**
- 18 **Վերջ ակտովթարներին**
- 20 **Հայ կանայք ռուս լուսանկարիչի գործերում**
- 22 **Խոհանոց՝ Ամանօրի թխուածք**
- 23 **Խորհուրդներ տնտեսուհիներին՝ Ամանօրեան մաքրութիւն Քաթրին Եաղուբի**
- 24 **Մարզանք Արման Տէր Ստեփանեան**
- 26 **Ժամանց**

Մշակութային եւ  
 Հասարակական  
**Յոյս**  
 Երկշաբաթաթերթ  
 Ե սարի, քիւ113, Դեկտեմբեր 21, 2011,  
 1200 րուման  
 Հայաստանում 320 դրամ



## 6 Ասի. Ալօ, ձմեռ պապի

Աշուղ Ծատուրօղլի

### Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	<b>Այս համարի հայերէն էջերում</b>	6	<b>Քերթի Քրիստոսեան Սաքի</b>	12	<b>Սաթենիկ Մկրտչեան</b>
4	<b>Տօնածառի խորհուրդը ըստ Արք. Արտակ Մանուկեանի</b>	10	<b>Իրանահայերի վերադարձը Հայաստան Ռոզալնա Ծատրեան եւ</b>		<b>Անւանի Իրանահայեր՝ Գոկտ. Նիսանեան Յովիկ Մինասեան</b>

<p><b>Յոյս</b>                  Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատէր՝                  Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝                  Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան,                  Լիա Խաչիկեան,                  Գարուն Սարգսեան,                  Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝                  Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝                  Քարմէն Ազարեան</p> <p>Կայք                  Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական                  Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն                  Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝                  Թեհրան, Էնդելար պողոտայ,                  Վալի Ասր քառուղի                  համար 1048                  66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝                  66495208</p> <p>hooyes@inbox.com                  www.hooyes.com</p>
---	---	--	---

# ԹՅԹ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ՍԵՊՈՒՅ ԱՐՔ. Ս ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ Ս. ԾՆՆԳԻ

## Պատարժան Խմբագրություն «Յոյս» Երկշաբաթաթերթի Աստ.

Մօտալուտ Նոր տարւայ եւ մեր Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան բարեբաստիկ տօների առիթով սիրոյ եւ գոհունակութեան ջերմ զգացումներով ողջունում եւ ի սրտէ շնորհաւորում եմ Ձեզ բոլորիդ, մաղթելով որ Բեթղեհէմի մտւորում, իր մօր գրկում ժպտացող Աստուծորդի մանուկը Ձեր ողջ կեանքը ժպիտով, սիրով, խաղաղութեամբ եւ հաճութեամբ լցնի ու պայծառացնի:


Նոր տարին եւ նրա յաջորդող Աստուածայայտնութեան տօնը սքանչելի առիթներ են յետադարձ ակնարկով տեսնելու անցեալ տարւայ մեր կեանքը իր բոլոր երեսներով եւ մի պահ խորհրդածելու թէ ինչ բաներ արեցինք եւ ինչ բաներ կարող էինք անել ու չարեցինք եւ այնուհետ մտածելու թէ ինչպէս ենք կարող զալիք մեր ժամանակը աւելիով արժեւորել: Անցած ժամանակը գետի հոսող ջուրի նման անցաւ. կարելի չէ հոսող նոյն ջուրին երկրորդ անգամ դիպչել. անցած, հոսած ջուրը նորից չի գայ. այնպէս եւ ժամանակը, անցեալը չի վերադառնայ, սակայն կարող ենք ապագայի մասին խորապէս մտածել եւ ներկան, որ մեր ձեռքն է այն գործով ու արդիւնաւոր կեանքով արժեւորել:

Անցեալ տարին մեր թեմի համար եղաւ յարաբերաբար ընդունելի եւ որոշ իրագործումներով եւ ինչու չէ նաեւ բացթողումներով յատկանշուող մի տարի. մենք արծաթէ դրամի երկու երեսներն էլ նայելու ենք, որպէսզի իրապաշտօրէն դիտենք մեր կեանքը: Այս օրերին, երբ հաւատով ու սիրով ապրենք կեանքը, վստահաբար այն աւելի իմաստալից կը դառնայ: Հաւատն ու սէրը քրիստոնէական մեր հասկացողութեամբ կապւած են դաստիարակութեան, այսինքն քրիստոնէական դաստիարակութեան, առանց որին, մեր կեանքը դատարկ է, ինչ դեր եւ պաշտօն էլ, որ ունենանք:

Աստուծային իմաստութեամբ պատւանդանւած կեանքն է աստուծահաճ: Յակոբոս առաքեալը գրում է. «Սինչդեռ երկնային իմաստութիւն ունեցող մարդը նախ մաքուր է լինում, ապա նաեւ խաղաղաբար, ազնիւ, բարեացակամ, ողորմածութեամբ եւ բարի գործերով արդիւնաւոր, անկողմնակալ եւ անկեղծ: Իսկ ով քո շուրջ խաղաղութիւն է սերմանում, նա արդարութիւն է հնծում»(Յկ.3:17-18):

Աստուծորդու հրաշափառ ծնունդը սքանչելի առիթ է մեր կեանքը Նրանով վերանորոգելու. Քրիստոսով վերանորոգւած կեանքը սիրոյ, խաղաղութեան եւ հաճութեան կեանքն է: Հազարաւոր տարիների մարդկային պատմութիւնը վկայում է, որ նա ժամանակ կոչւած կտաւ-պաստառի վրայ հետք է թողել, նա հանդիսացել է մի աստղ, որ իր լոյսը Քրիստոս-Աստղից առած լուսաւորել է իր շրջապատը: Էականը հոգու պայծառութիւնն է, որովհետեւ հոգու պտուղներն են.-«Սէր, խաղաղութիւն, ուրախութիւն, համբե-

# ԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



րատարութիւն, ազնութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն»։ Քրիստոսով նորոգւած մարդը իբրեւ նոր արարած մահացնում է իր մարդկային կրքերն ու ցանկութիւնները եւ կերպարանափոխուած ապրում իր կեանքը։ Առաքելի բառերով՝ «Որեւէ մէկը, որ միացած է Քրիստոսին նոր արարած է. նա այլեւս այն չէ, ինչ որ նախապէս էր, որովհետեւ նա ամբողջութեամբ նորոգւեց» (Բ կր 5:17)։

Պարագայական նորոգութիւնը, եկեղեցասիրութիւնը մարդս անկումի են առաջնորդում. եսասիրութիւնն ու եսամոլութիւնը ծնունդ են տալիս կեղծ համեստութեան եւ խոնարհութեան եւ մարդս հեռացնում են Քրիստոսից եւ նրան գեհն են առաջնորդում։

Տօնական այս օրերին նորոգենք մենք մեզ եւ առաջնորդւենք Ա.Յոզով եւ ոչ մեր մարդկային ցանկութիւններով. մեր տները լցնենք Քրիստոս-Տէրով. մեր եկեղեցական եւ ազգային կեանքը ջերմացնենք ու պայծառացնենք Աստուծահաճ գործերով եւ այն ժամանակ վստահ եղէք, որ հրեշտակների քաղցրահնչիւն երգը կը լինի մեզ առաջնորդող երգ.-

**Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում  
Խաղաղութի՛ւն երկրի վրայ  
Եւ հաճութի՛ւն մարդկանց միջեւ.**

Այս խոհերով, մտածումներով ու զգացումներով շնորհաւորում են Ձեզ սիրելիներ, եւ աստուծային օրհնութիւն են հայցում Ձեր անձնական, ընտանեկան եւ հասարակական կեանքի առաւել պայծառացման ի խնդիր։

Շնորհաւոր Նոր տարի եւ Ա. Ծնունդ։

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ

Ձեզ եւ մեզ մեծ Աւետիս, ամէն։

Մնան քրիստոնէական ջերմ սիրով եւ օրհնութեամբ։

ԱՂՅԱՐԱՐ՝  
  
ՍԵՊՈՒՀ ԱՐԲ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  


# ԻՐԱՆԱՀԱՅԵՐԸ 2011-ԻՆ

## Որո՞նք էին մեր համայնքի կարելու իրադարձությունները անցեալ տարի

Ռոբերտ Սաֆարեան

### «ՀԱՅԱԶ»-Ը ՓԱԿԻՑ

Անցեալ տարի Ապրիլին պարզեց, որ «Հայազ»-ը դադարեցրել է իր աշխատանքը: «Հայազ»-ը իրանահայերի համար ծանօթ անուն էր, կապած հազարաւոր իրանահայերի հանգիստ արտագաղթի հետ: Սօտաւորապէս մի տասնամեակ էր, ինչ «Հայազ»-ն էր կազմակերպում իրանահայերի գաղթը դէպի Գլենդէլ՝ Վիէննայի ճանապարհով: Բայց դրա փակելու մէջ որեւէ դեր չունէինք մենք: Այն բիւջէ էր ստանում ԱՄՆ-ի կառավարութիւնից, որն իր տնտեսական ճգնաժամի պատճառով, այս տարի չյատկացրեց այդ բիւջէն: Ինչ որ է, մէկ-երկու ամիս ժամանակ տուեց, որ այն հայրենակիցները, որ ցանկանում են, իրենց դիմումները ներկայացնեն, եւ յետոյ վերջ: Մինչ այդ թւականը դիմում ներկայացրածները մտահոգւելու կարիք չունեն, քանի որ նրանց գործերը կը կարգադրուի: Սա ամենեւին լաւ լուր չէր, իրանահայ հասարակ մարդու համար, իսկ համայնքի ղեկավարութիւնից ոչինչ չլսեց այս մասին: Յամենայն դէպս, հայ ժողովուրդը, յատկապէս իրանահայերը, հնարամիտ ժողովուրդ են, այսպիսի բաներից չեն յուսահատուում եւ ուշ թէ շուտ կը գտնեն նոր ճանապարհներ: Վիէննա չեղաւ Սադրիդ կամ Լարնակա կամ ...

գողութիւնն էր: Ընդհանրապէս, երբ որեւէ վարչական մարմնի յանձնած գործերի շրջանակում գողութիւն է լինում, նրանք ներողութիւն են խնդրում ժողովրդից իրենց թերացման համար եւ ուղղակի պատասխանատուները հրաժարում կան պատժում են: Բայց հարկ չէ մենք հետեւենք ուրիշներին: Մեզ մօտ ամէն բան իր ինքնուրոյն ձեւն ունի: Սպահանի հայոց թեմի հաղորդագրութիւնների եւ արտայայտութիւնների համաձայն, իրանահայութիւնը պիտի իրեն երախտապարտ զգայ Սպահանի հայոց թեմի պատասխանատուներին: Նրանք բազմիցս յայտարարել են, որ ազգային մարմինները ոչ մի ջանք չեն խնայել վանքի թանգարանի իրերի դասակարգման եւ պահպանման գործում, իսկ գողութիւնից յետոյ, ամենաարագաչարժ ձեւերով գտել են գողերին եւ ձերբակալել տուել: Նրանք վստահեցնում են մեզ, որ մտահոգւելու բան չկայ: Նրանք յատկապէս մեղադրում են «անպատասխանատու» լրատւամիջոցներին, որ խանգարել են գործի վերահասութիւնը, թէ չէ սրանից էլ աւելի լաւ կաշխատէին: Միայն մոռանում են ասել, որ եթէ չլինէին այդ լրատւամիջոցների լրատութիւնը, դեռ երեւի ոչ ոք ոչ մի բան էլ չէր իմանայ այդ գողութեան մասին:

Բաբախանեանը, որ հրապարակ է եկել թափանցիկութեան եւ խնայողութեան խոստումներով: Հանդիպումներ միութիւնների ներկայացուցիչների հետ, այցելութիւններ թաղամասեր, մամլոյ ասուլիս: «Յոյս»-ին տւած հարցազրոյցում, նա խոստացել է հրապարակել ազգային կալուածների ցանկը. թող ամէն մարդ իմանայ ինչ ունենք, որտեղից է գալիս փողերը եւ ուր է ծախսուում: Հիանալի: Սպասում ենք:

### «ԹՈՒՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ՇԷՆՔԸ

Այսպիսի վիճայարոյց չէնք իրանահայերը չեն ունեցել: Դա մի քանի տարի ընկած էր քանդած կիսաւեր վիճակում, յետոյ շտապ աշխատանք սկսեց, եւ չէնք շահագործման յանձնեց այս տարի Սեպտեմբերին: Բայց վատն այն էր, որ երբ եղանակը ցրտեց եւ ուզեցին միացնել ջեռուցումը, դասարանների եւ նոյնիսկ դպրոցի տեսչի գրասենեակի առաստաղից սկսեց ջուր թափել, եւ մի քանի տեղ էլ ծածկը փլեց (փառք Աստուծոյ դէպքի ժամանակ մարդ չկար դպրոցում, թէ չէ աւելի վիճայարոյց էլ կը դառնար «Թունեան»-ի չէնքը): Դպրոցը աշակերտութեան մեծ գոհունակութեամբ եւ ծնողների լուրջ դժգոհութեամբ մի քանի օր արծակեց, իսկ հիմա վերսկսել է իր նորմալ ընթացքը, իհարկէ ասուում է, սրահում վառարան էլ են տեղադրուել, որը, բնականաբար նոր ծախս է եւ այնքան էլ չի համընկնում նոր թեմականի խնայողական քաղաքականութեանը: Միաժամանակ պատգամաւորականի նիստերից մէկի ընթացքում, հաշիւներին մարմինը հարց բարձրացրեց չէնքի կառուցման ծախս

### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՎԱՆՔԻ ԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ տարւայ կարելուրագոյն դէպքը, որի մէջ մեր իրանահայ հայրենակիցները իրապէս ակտիւ դեր ունէին, դա Ն. Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մի քանի մանրանկարների

### ՆՈՐ ԹԵՍԱԿԱՆ՝ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

Անցեալ տարի, Մայիսին, Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովը (այսինքն՝ մեր՝ իրանահայերի Սեջլիս-ը) ընտրեց նոր թեմական խորհուրդ (այսինքն՝ կառավարութիւն): Նոր թեմական խորհրդի ատենապետն է եղարդ



սերի որոշ հարցերի շուրջ, որը պիտի ստուգվի ապագայում: Աստծով:

**«ԱԼԻՔ»-Ի 80-ԱՄԵԱԿԸ**

Երբ պակասում են դէպքերը, ամենակներն ու տարեդարձները դառնում են դէպք: Անցեալ տարի մեր համայնքի միակ օրաթերթի՝ «ԱԼԻՔ»-ի 80-ամեակն էր, որը միաժամանակ Իրանում անընդմէջ հրատարակած երկրորդ հին թերթն է: Տեղի ունեցան ձեռնարկներ, աշակերտութեան այցելութիւններ օրաթերթի տպարան, եւ կլոր սեղան: Ի վերջոյ կատակ բան չէ 80 տարի թերթ հրատարակելը. պէտք էր, բայց մի գուցէ՝ մի քիչ շատ:

**ՍՐՔԱԶԱՆ ԶՅՐ ՆՈՐ ՕԳՆԱԿԱՆԸ**

Յուլիսին Անթիլիասից Թեհրան է ժամանել Տէր Մակար Վարդապետ Աշքարեանը, եւ գործի է անցել որպէս ԹՅԹ առաջնորդի օգնական: Նա չի կատարելու աւագ քահանայի դերը, որը Սրբազան Զօր բացակայութեան ժամանակ տնօրինում է թեմի աշխատանքները, այլ օգնելու է առաջնորդին իր հոգեւոր աշխատանքներում, այդ թւում, հաւանաբար հոգեւոր դպրոց հիմնադրելու գործում: Այդ բոլորը տեղին եւ լաւ, բայց իրականութիւնն այն է, որ այստեղ մի բան մի քիչ նեղացնում է իրանահայերին: Արդեօք հնարաւոր չէր, այդ պարտականութիւնները կատարելու իրանա-

հայ ուժերի միջոցով եւ արդեօք այդ գործերի համար էլ մենք կարիք ունեն՞ք Անթիլիասից գործուղած հոգեւորականների:

**ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՏԱՐԻ**

Անցեալ տարի յայտարարել էր մանուկների տարի, որի առիթով տեղի ունեցան զանազան միջոցառումներ: Զոկտեմբերի 14-ին, Արարատ մարզաւանում, մատուռի շրջափակում կայացաւ թուլցիկների փառատօն, որին իր մասնակցութիւնը բերեց նաեւ ԹՅԹ առաջնորդ Տէր Սեպուհ Արք. Սարգսեանը: Սրբազան հայրը ծանօթացաւ եւ մօտից շփուեց մանուկների եւ նրանց ծնողների հետ:



# ԱՍԻ. ԱԼՕ՛, ՁՄԵ՛Ռ ՊԱՊԻ

Միրելի ժողովուրդ, իմացայ օր Չմեռ պապը ճամփից հասել է ու հէնց էս մեր սարի ետեւն է: Ասի զանգ տամ, գայ, խիզնին օր հաւաքում են մէր տայ, համա, իմ մեղքն էր, թէ իրանը, էլի խօսքը գնաց հասաւ մալում չի որդի...Թէ հալն արիք, կարդացէք, թէ չէ, գնացէք ձեր քէֆին:

Ուրախ Նոր Տարի ունենաք:

Ձեր խոնարհ ծառայ  
Ծատուրոյլի

Ասի. Ալօ , Ձմեռ պապի, բարով եկար հազար բարի,  
Ղաղամդ մեր աչքի վրայ, նորից մեզի ետդ ես արի,  
Ներողութիւն, շատ կը ներես, ամօթ չլնի հարցնելը,  
էդ շալակիդ տոպրակումը ի՞նչ ես բերի մեզ էս տարի:

Ասաւ, Ծատուր, քու խօսքերը թամամ շարած մարգարիտ է,  
Լիզւիդ տակը օձի գահր է, եփ կը կծես Ասուած գիտէ,  
Տոպրակիցս ի՞նչ ես ուզում, էրեխայ ես դառի միթէ՞ ,  
Պատմի, տեսնենք, ի՞նչ կայ, չկայ, ինչպէ՞ս անցաւ անցած տարին:

Ասի. Քու բարի աղօթքով տարին անցաւ հաշտութեան մէջ,  
Մեր համայնքի ժողովներում չկար ոչ մէ կռիւ ու վէճ,  
Թաղերումը խուրդա-մուրդա բաներ էլան, համա էդ հեջ.  
Ասաւ. Ծատուր, մտքինդ ասա, իզուր խօսքը մի երկարի:

Ասի. Վալլա, ընտրուել է Թեհրանի նոր թեմականը,  
Թեմի թագգայ նախագահն է Պարոն Էդւարդ Բաբախանը,  
Ասուլիս ու հարց ու զրուց, ո՞վ էր տեսել դեռ էս բանը.  
Ասաւ. Ըտենց նախագահի, աղբաթը թող անի բարի:

Էդւարդն ասաւ, մինչեւ հիմա մենք գործել ենք հայավարի,  
Ըստից դէնը պիտի գործենք, ստանդարտ ու մարդավարի,  
Կարգին հաշիւ կը տանք, թէ ով ի՞նչ է բերի, ի՞նչ է տարի,  
Ասաւ.էտ օր դու ես ասում, նման է համայնավարի:

Ասի. «Ալիք» օրաթերթը արդէն ութսուն տարեկան է,  
Ոչ փոխել է, ոչ ծերացել, հալա յեղափոխական է,  
Ասաւ. Ի՞նչն է յեղափոխում: Ասի. Հարցդ թեական է.  
Ասաւ.- Ռոբերթ Սաֆարի հետ կարծես խօսքդ մէկ ես արի:

Անցած տարի բարով-խերով բացւեց «Թունիեան» դպրոցը,  
Էրեխեքին ուրախ զւարթ առաւ իր մայրական ծոցը,  
Բայց ավիստս օր, ոչ զազ ունէր, ոչ պատրաստ էր խոհանոցը,  
Քարմէնն,-ասաւ,- թէ համբերի, Ասծով էդ եկող տարի:



Նոր Ջուղան էլ ճամբայ գցեց նոր «կրթական համալիրը»,  
Քլուբն էլի փակւած մնաց, մալու՛մ չի, որտեղ է գիրը,  
Կարծեն դազնի տակն է հասսի մեր թեմականի քաֆկիրը,  
Ասաւ. Ծախու գետին բոլ կայ, կը ճարւի իւղոտ մուշտարի:


Ասի. Վալլա, էլ ի՞նչ ասեն, էտ քու մօտ են խաբարները,  
Լսել ես, օր դէյր են էլի վանքի սրբոց նկարները,  
Ասեն, բալքի Լոնդոն, Փարիզ տեսած ըլնես մէկի ձեռը,  
Ասաւ. Լոնդոն խաբար չկայ, դովրըվարըդ դու ման արի:



Ասի. էլ ի՞նչ, պատմի տեսնենք, հայրենիքից, դենից-դէսից,  
ՀՀԿ-ից, ԲՀԿ-ից, ՀՅԴ-ից, Կոնգրեսից,  
Երկխօսութիւնն ու՞ր կապ տւին ու ետ դառան ճամփու կէսից,  
Ասաւ. Լեւոնիկն ու Սերգօն շախմատի նոր խաղ են շարի:

Ասի. Ախեր, բա ի՞նչ կլնի ազգային միասնութիւնը,  
Թամամ շալամ-շուրայ դառաւ հայոց բազմաձայնութիւնը,  
Քու կարծիքով ո՞վ կը գրի էգուց հայոց պատմութիւնը.  
Ասաւ. Կարծեն ազգը պիտի նորից պարի իր Քոչարին:

Ամրիկայից բա ի՞նչ խաբար, ասուն են վարչքաստ էլի,  
Ասուն է էլ յոյս չունենաք գրին կարդի ու վելֆերի,  
ՀԱՅԱՍ-ի դուռն էլ կապեցին, ասին. բոլ է, էլ մի բերի,  
Ասաւ. Հայը գաղթական է, մէ ուրիշ ճամփայ կը ճարի:



Ասի թամամ երկրներում ազատ է քու ել ու մուտը,  
Դու կիմանաս էս աշխարհի լաւն ու վատը, ճիշտն ու սուտը,  
Թամամ մէջը խճճել եմ, ում ձեռն է կծիկի տուտը.  
Ասաւ. Ձէքի, ու՞ր ես ասեմ, քոռ էլի, դու ինքդ ճարի:

Ասի. Պապի...Ասաւ. Բոլ է, վերջացաւ մոբայլիս կարդը.  
Կարծես թամամ քեզ եմ տի էս աշխարհի ցաւ ու դարդը,  
Էդքան խօ բայդուշ չի ըլնի ժողովրդի աշուղ մարդը,  
Առ չունգուռդ, ուրախ զւարթ մէ գովք ասա տօնածառի:

Ասի. Ախեր Ձմեռ Պապի, էլ երգելու հալ չմնաց,  
Թանգութունը տուն է քանդում, ծափ տալ ու պար գալ չմնաց,  
Թամամ վախից կուչ եմ էկի, էլ Ռոստամ ու Ջալ չմնաց.  
Ասաւ. Էտ էլ անց կը կենայ, էլ վերջը չի խօ աշխարհի:

Էս օր ասաւ, ասի դէ, լաւ. Հիմի ասա տեսնենք, քանի կառնես, ադրես տամ, գաս էրե-  
խէքին մէր տաս: Ասաւ, Ծատուր ջան, դու խօ օտար չես, դաբըլ չունի, համա բենգի-  
նը լիթըր եօթըր հարուր թուման եմ ածում, ջառիմէքն էլ խօ իմանում ես, թէ բռնեցին,  
ինչ աշխատել եմ, պիտի տամ. Էտ է օր էս տարի հինգ թուլէն կանի էսքան: Էտ օր  
ասաւ մոբայլս կապեցի, ասի, ջանս դուս գայ, հէնց ինքս ձմեռ պապի կլնեմ: Գնացի  
մէ էրկու քիլօ նոխտնչի-քիշմիշ առայ, մէ խուրդայ էլ գոյնգոյն նողլ, բերի ռանգ-  
բռանգ թրթերու մէջ փաթեցի ու բաժնեցի էրեխէքուն: Տեսայ, մոռթ եմ արի, ասի, թէ  
լաւ էրեխէք ըլնէք ու պապին մամին լսէք ու դասներդ էլ լաւ սովորէք, գալ տարի Ձմեռ  
Պապին սիրուն-սիրուն խաղալիքներ կը բերի ձեր համար: Յետոյ էլ չունգուռս դրի  
դոշիս ու հմարները երգեցի:

Նոր տարի ջան, նոր տարի  
Կարօտել ենք, շուտ արի,  
Տօնածառը զարդարի,  
Դովըրը անենք պապարի:

Էս տարի չէլաւ, գալ տարի,  
Էս տարի չէլաւ, գալ տարի:

Բեր մեզ կարգին նւերներ,  
Թագգայ մոբայլ, քոմփիլթեր,  
Պապին՝ ֆորշէ, Ֆերարի,  
Մամին՝ Փարիզ տատարի:

Էս տարի չէլաւ, գալ տարի,  
Էս տարի չէլաւ, գալ տարի:

Ձեր տեղը դատարկ, շատ լաւ անցաւ:

# ՄԱՄՈՒԼ ԵՒ ԳԱՂԱՊ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԱՅ ՄԱՍԻՆ

Չորեքշաբթի, Նոյեմբերի 16-ին, «Ալիք» օրաթերթի 80-ամեակը մեծարող յանձնախմբի նախաձեռնությամբ «Հայ Ակումբ»-ի փոքր սրահում տեղի ունեցավ կլոր սեղան նստիված Հայերեն մամուլին առնչող հարցերին ու դժարութիւններին: Կլոր սեղանին մասնակցում էին «Ալիք» օրաթերթի խմբագիր Դերենիկ Մելիքեանը, «Դրօշակ» թերթի խմբագիր Կարեն Խանլարեանը, «Հայելի» կայքի վարիչ Սեւան Պետրոսեանը, Հայերեն ռադիոժամի աշխատակից Ռոբերթ Մարգարեանը եւ «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր Ռոբերթ Սաֆարեանը: Կլոր սեղանը վարում էր Բաֆֆի Փիրումեանը: Անցեալ համարում մեր ընթերցողներին ներկայացրինք կլոր սեղանի առաջին մասը: Ստորեւ տպագրում ենք դրա երկրորդ բաժինը, որը հիմնականում վերաբերում է այս հարցին, թէ որոնք են հայ մամուլի առաջնահերթութիւնները:



## Ռոբերթ Սաֆարեան

Դերենիկի բացատրութիւնները այս մասին թէ մենք թերթ ենք հրատարակում, մի առաքելութիւն տարածելու համար... դա մամուլի մի տեսակն է: Մեր համայնքում, «Ալիք»-ը պարզապէս այդպիսի թերթ է: Կայ կուսակցութիւն, որն ունի իր յատուկ գաղափարախօսութիւնը, եւ թերթ է հրատարակում, իր գաղափարը տարածելու համար: Դա հիմնական նպատակն է եւ միւս բնագաւառները բոլորը պիտի ծառայեն դրան: Բայց օրինակի համար «Յոյս»-ը չունի այդպիսի յատուկ նպատակ, որ դրանից բացի ուրիշ բան չպիտի հրատարակի: Ամէն հարցի մասին կարելի է խօսել. սկզբունքը սա է ... կարելի է խօսել խառն ամուսնութիւնների մասին, կարելի է խօսել մեր մէջ թմրամոլութեան աճի մասին, կարելի է խօսել այն մասին, որ ցեղասպանութեան ճանաչման արշաւը արդեօք խելացի ռազմավարութիւն է թէ ոչ: Բայց պարզ է, որ մի կուսակցական թերթում, այս բոլորի մասին չի կարելի խօսել, եթէ դրանք չեն համընկնում կուսակցութեան քաղաքականութեանը:

Երեւի մենք պիտի զանազանէինք մամուլի տարբեր տեսակները... «Դրօշակ»-ի խնդիրները եւ հարցերը բոլորովին տարբեր տեսակի խնդիրներ են քան ասենք «Հայելի» կայքինը ...

## Կարեն Խանլարեան

Կան ազգային քրքրամաներ. ցեղասպանութիւն, հայ դատ, սփիւռքում հայապահպանման խնդիրը, Հայաստանում ազգային նկարագրի անարատ պահելու խնդիրը, Լեռնային Ղարաբաղի, եւ կաւելացնէի նաեւ Ջաւախքի հայութեան մարդկային իրաւունքների խնդիրը: Եւ ընդհանրապէս մեր ազգային հարցին առնչող խնդիր-

ներ կան, որ սրանք պիտի լինեն այն կարմիր սահմանները, որից անցնել չի կարող հայ մամուլը: Բայց սրանք համազգային համընդհանուր խնդիրներ են: ԶԼՄ-ները պատահական չեն գոյանում եւ անպայման քաղաքական եւ գաղափարախօսական գիծ են հետապնդում: Ես չեմ հաւատում, որ կայ թերթ, բացի մասնագիտական մամուլը, առանց գաղափարախօսութեան: Ամէն թերթ կունենայ իր առաքելութիւնը եւ դրա մէջ ոչ մի սարսափելի բան չկայ: Դրանք ոչ միայն գեղեցկացնում եւ ճոխացնում են մեր ազգային կեանքը, այլեւ զարգացնում են այն: Այն բոլոր թերթերը, որ ասում



«Դրօշակ» թերթի խմբագիր՝ Կարեն Խանլարեան

**մեր ազգային հարցին առնչող խնդիրներ կան, որ սրանք պիտի լինեն այն կարմիր սահմանները, որից անցնել չի կարող հայ մամուլը:**



«Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան

**Մտածում ենք որպէս մամուլ, մեր թերթում ամէն տեսակ միտք պիտի իր տեղն ունենայ:**

# ՔԱՐԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ

## ՈՒՆԻ ՄԱՍԻՆ (Բ. ՄԱՍ)



Են մենք չունենք գաղափարախօսական եւ քաղաքական ուղղութիւն, դրանք կամ ստում են, կամ շատ նեղ մասնագիտական բնոյթ ունեն: ... Ես որպէս դաշնակցական, իմ թերթի գաղափարական եւ քաղաքական գիծը պահպանելու խնդիր ունեմ: Ամէն թերթ պիտի իր քաղաքական գիծը հետապնդի, բայց պայմանով, որ այն, սկզբում ասածս աքսիոմները չխաթարի: Դրանք մեր պետականութեան պահպանման, մեր քաղաքական դատի հետապնդման (հայ դատը ներառեալ), ցեղասպանութեան ճանաչման, մեր հայրենի Ջաւախքի եւ մեր լեռնային Ղա-

րաբաղի խնդիրներն են: Սրանց մօտեմալ կամ քաղաքական իմաստով շահարկել, արդէն չափազանց կոպիտ սխալ կարող է լինել մի թերթի համար:

### Ռոբերթ Սաֆարեան

Ես մի առումով համաձայն եմ, որ որեւէ թերթ չի կարող յաւակնել, որ որեւէ գաղափարախօսութիւն չունի: Վերջին հաշւով, նոյնիսկ միութրի ընտրութիւնները եւ դասաւորումը, իր խորքում մի մտածելակերպ եւ մօտեցում է պարունակում: Բայց դրանով հանդերձ, ունենք տարբեր տեսակի մամուլ: Թոյլ տւէք կոնկրետ խօսեն:

«Յոյս»-ը Լեւոն Տէր-Պետրոսեանի մասին մի յօդաձեռնի հաւաքածոյ է տպագրում, որում կայ թէ Վահան Իշխանեանի յօդաձեռն, ուր Տէր-Պետրոսեանը մեղադրում է, որ 1996-ին ընտրութիւնների յետօրէին բողոքողների դէմ բռնի ուժ է գործի դրել, կայ իր Տէր-Պետրոսեանի գրութիւնը, ուր նա բացատրում է, թէ Ղարաբաղը ժախելու խնդիր չի եղել, եւ կայ մի ժամանակագրութիւն Տէր-Պետրոսեանի անցեալից մինչեւ այսօրւայ կտրած ճանապարհի մասին ... նման բան «Ալիք»-ը չի կարող անել: Նկատի առնելով այն կարմիր գծերը, որ Կարէնը բացատրեց, նման յօդաձեռնի հաւաքածոյ «Ալիքը»- չի կարող հրատարակել: Կարելի է ասել, որ սա էլ «Յոյս»-ի համար մի տեսակ գաղափարախօսութիւն է: Մի իմաստով՝ այո, բայց այստեղ միտքն այն է, որ մտածում ենք որպէս մամուլ, մեր թերթում ամէն տեսակ միտք պիտի իր տեղն ունենայ: Մենք դրանք դնում ենք իրար կողքի եւ թոյլ ենք տալիս ընթերցողը իր դատողութիւնն ունենայ:

### Րաֆֆի Փիրումեան

Դա միայն «Ալիք»-ի մասի՞ն էք ասում, թէ՞ ընդհանրապէս քաղաքական գիծ հետապնդող թերթերի:



Հայերէն ռադիօժամից Ռոբերթ Սարգսարեան

**Ես ցաւում եմ, որ որեւէ հայկական լրատւական գործակալութիւն պաշտօնական ներկայացուցչութիւն չունի Իրանում:**



«Հայելի» կայքի վարիչ՝ Մեան Պետրոսեան

**Մի ուրիշ ոլորտ էլ կայ, որ անուշադրութեան է մատնել եւ դա սփիւռքների միջեւ կայան է:**



«Ալիք» օրաթերթի խմբագիր՝ Դերենիկ Մելիքեան

**Վերջին համահայկական մամուլի ժողովում ճշտեց մէկ թիրախ. այն է ընդառաջ ցեղասպանութեան 100-ամեակին:**

### **Ռոբերթ Սաֆարեան**

Ես կասեի ընդհանուր առմամբ դա ճիշտ է:

### **Ռաֆֆի Փիրումեան**

Ֆրանսիայում տպագրող «Ունանիտե» թերթը տարիներ շարունակ եղել է այդ երկրի կոմունիստական կուսակցութեան թերթը, եւ միաժամանակ Ֆրանսիայում տպագրող երկրորդ բարձր թիրաժն ունի: Ո՞նց էք բացատրում ...

### **Ռոբերթ Սաֆարեան**

Ծիշտն ասած, ես մինչեւ հիմա «Ունանիտե»-ն չեմ էլ տեսել: Եթէ հակառակ դեպքեր կան, պիտի ուսումնասիրել: Այն, ինչ կարող եմ կրկնել այն է, որ նկատի առնելով այստեղ բացատրած մտեցումը համընդհանուր համահայկական խնդիրների եւ կարմիր գծերի մասին, դժւար թէ «Ալիք»-ը կարողանայ միաժամանակ համայնքային մի ընդհանուր թերթի ֆունկցիաները կատարել:

### **Ռոբերտ Մարգարեան**

Երբ կուսակցական թերթի մասին ենք խօսում, դա չի նշանակում, որ դրա լսարանը միայն կուսակցութեան անդամներն են: Այդ լսարանը կարող է աւելի լայն լինել: Սա «Ունանիտե»-ի մասին ձեր դրած հարցը կարող է մասամբ բացատրել: Ես կը ցանկանայի մեր համայնքի մի երկու առաջնահերթութիւնների մասին խօսել: Երկրորդելով Արցախի եւ ցեղասպանութեան ճանաչման հարցերի կարեւորութիւնը, պիտի ասեմ կայ անուշադրութեան մատնւած մի դաշտ. այդ Իրան-Յայաստան յարաբերութիւններում լրատւական դաշտն է: Պիտի ստեղծւի Իրան-Յայաստան լրատւական բնագաւառ եւ հարց դնել, որ իրանահայ լրատւամիջոցի դերն այդտեղ ինչ է կարող լինել: Լրատւութեան ասպարէզում հայ մամուլի վրայ մի դեր է դրւած եղել, որը չի կատար-

ւել: Խօսքը փոխայցելութիւնների մասին չէ: Դա եղել է: Յարցը ճիշտ լրատւութիւն կատարելու մասին է: Երկու երկրի դեպքերը ճիշտ արձագանքելու հարցն է: Ես ցաւում եմ, որ որեւէ հայկական լրատւական գործակալութիւն պաշտօնական ներկայացուցչութիւն չունի Իրանում: Փոխադարձաբար, Իրանի լրատւական գործակալութիւններն էլ Յայաստանում ներկայացուցիչ չունեն: Միայն կայ Իրանի հեռուստատեսութեան թղթակիցը: Արդիւնքը լինում է այն, որ այսօր պարսկական լրատւամիջոցները Յայաստանի մասին լրատւութեան համար դիմում են «Թրենդ» գործակալութեան: Նոյնպէս էլ Յայաստանի լրատւամիջոցները Իրանի ներքին խնդիրների մասին լրատւութեան համար դիմում են արեւմտեան գործակալութիւններին:

### **Սեւան Պետրոսեան**

Մի ուրիշ ոլորտ էլ կայ, որ անուշադրութեան է մատնւել եւ դա սփիւռքների միջեւ կապն է: Սփիւռքահայերը ունեն երազանքներ, հոգսեր, խնդիրներ, մարտահրաւերներ, որոնք չեն հասկանում հայաստանցիները: Լրատւամիջոցները կարող են այդ կապը ստեղծել, մի բան որ քիչ թէ շատ բաց է թողնւել:

### **Դերենիկ Մելիքեան**

Ստահուգելու հարց չկայ, որ այնինչ թրքական թերթը ունի միլիոնաւոր տպաքանակ եւ մենք չունենք: Ես դա պարտութիւն չեմ համարում: Մենք ունենք Յրանտ Դինքը, թրքական մամուլում արտացոլող թուրք մտաւորականութեան մէջ հայամէտ խաւերի դրսեւորումը:

Մենք 217 տարւայ հայերէն մամուլ ունենք, որի նպատակը բնականաբար եղել է հայապահպանման առաքելութիւնը: Յայերէն առաջին թերթի հրատարակութիւնից հարիւր տարի յետոյ, իրանա-

հայ համայնքն էլ «Շաւիղ»-ով իր մամուլն ունեցաւ: Յայապահպանումը եւ ազգային ազատագրական շարժումը եղել է հայ մամուլի առաքելութիւնը: Սփիւռքի մամուլը, եւ ոչ միայն դաշնակցական մամուլը, ազգային եւ ապազգային պայքար է ունեցել: Այս է եղել կարգավիճակը. հիմա եթէ այդ մամուլը փրոֆէշընալ չի եղել, դա մեր մեղքը չի եղել, դա պատմական անհրաժեշտութիւն է եղել:

Անկախութիւնից յետոյ, մեր հայաստանեան մամուլը անցումային շրջան է անցկացնում, որովհետեւ, ընդհանրապէս Յայաստանի քաղաքական դաշտը կայացած չէ: Վերջին համահայկական մամուլի ժողովում ճշտւեց մէկ թիրախ. այն է ընդառաջ ցեղասպանութեան 100-ամեակին: Եւ ոչ մեղ իմաստով, այլ ընդհանուր առմամբ հայ դատ, որը հայոց ազգային գաղափարախօսութեան հիմքն է: Յայ դատը ինչ որ խմբակցութիւնների եւ կամ մէկ կուսակցութեան կարգախօսք չէ: Յայ դատի մասն է կազմում Յայաստանի պետական հզօրացումը: Սա հիմնահարց է: Պետական հզօրացում նշանակում է բոլոր այն խնդիրները, որ պատճառ են դառնում արտագաղթի: Պիտի դրանց առաջն առնել: Ժողովրդավարութիւնը, սոցիալ տնտեսական հարցերը, մի խօսքով դէպի քաղաքական հասարակական մշակութային պետութեան տանելու մէկ ու միակ ուղին, որը կարծում եմ մեր մամուլն էլ պէտք է լծւի դրան:

# «ՀԱՅԵԼԻ»-Ն ԿՈՐԺՐԵԼ Է ՓԱՅԼԸ

Լեւոն Ահարոնեան

Երբ «Յոյս»-ի 112-րդ համարը ստացայ, ըստ սովորութեան սկսեցի թերթել եւ յօդածոների վերնագրերը կարդալ: Պարսկերէն բաժնի հինգերորդ էջում նկատեցի հետեւեալ վերնագիրը. «Նմուշներ «Յայելի» կայքում տեղադրած «Ալիք» օրաթերթի 80-ամեակի մասին յօդածի վերջում գրած մեկնաբանութիւններից»:

Առաջին մեկնաբանութիւնը առանց ազգանունի է եւ միայն թւական ունի: Նոյնն է երկրորդը: Երրորդը «քո ընկերներից» անւանելով իրեն գրել է հետեւեալը.

«Դուք մեկնաբանէք նեղմիտ եւ պահպանողական, բայց «Ալիք»-ի գրողներն իրեն բոլոր թուլութիւններով հանդերձ, այն աստիճանի տղամարդ էին, որ նոյնիսկ ձեր նմաններին հայ լինելու պատճառով պաշտպանել են: Դուք երբեք չէք տեսնի, որ «Ալիք»-ում ձեր տնօրէնի պրն. Ահարոնեանի իրաւաբանական հարցերի եւ դրամաշորթութեան (*էխթելաս*) մասին մի խօսք ասած լինեն»:

Այդ *կոմենտները* կարդալով, անմիջապէս յիշեցի 2000 թւականի Յոկտեմբերի 28-ին, 12-րդ պատգամաւորական ընտրութիւնների նախօրէն, երբ որոշները որոշեցին չթողնել, որ ես ընտրուեմ: Ճիշտ նոյն ոճով մէկը միւսի յետեւից մեղադրանքներ էին ծլում: Միւս կողմից, նրանք մի բաներ էին տեսնում, որ դժբախտաբար դրանք իմ աչքերը չէին ընկալում: Ծորակաշինութեան գործարանն էին տեսնում 1000 հոգի աշխատողներով, բայց իմ տկար աչքերը դրանց չէր տեսնում: Իրականութիւնն այս է, որ մի կազմակերպութիւն կամ մի խումբ մարդիկ իրենց տրամադրութեան տակ ունեն մի շարք անձնաւորութիւններ, աւելի ճիշտ է ասել՝ գործիքներ, որոնց պէտք եղած պահին հրապարակ են հանում:

Հարցն որտեղի՞ց է սկսւում:

«Շարդ» պարսկերէն հրատարակող թերթում, «Յոյս»-ի խմբագիր՝ Ռ. Սաֆարեանը պարսկերէն լեզուով մի յօդած է գրել «Ալիք» օրաթերթի 80-ամեակի մասին: «Յոյս»-ի 112-րդ համարի պարսկերէն բաժնի 4-րդ եւ 5-րդ էջերում տպագրւած է այդ յօդածը: Դրա բովանդակութիւնը հիմնականում առնչութիւն չունի «Յոյս» երկշաբաթաթերթի հետ: Ի պատասխան դրան այսպիսի յարձակումների դիմելը, ինձ համար պարզ է դարձնում, որ հարցը թշնամութիւնն է մի անկախ ազգանւեր երկշաբաթաթերթի նկատմամբ:

Յամենայն դէպս, ինչքան մտածում եմ, թէ որտեղի՞ց են «դրամաշորթութիւն» կատարել, խելքիս բան չի գալիս: Ուստի որոշում եմ իմ տնտեսական աշխատանքների ասպարէզները բացատրել, կարող է մեր սիրելի ընթերցողները մի բան գտնեն:

«Սաթի» ընկերութեան մէջ աշխատող 200 պաշտօնեաների 47% տոկոսը հայեր են: Նրանց վճարող աշխատավարձերի կողքին, ընկերութիւնը վճարում է պետական հարկ, որի մէջ մինչեւ հիմա դրամաշորթութեան գրպարտանքին չի ենթարկւել: «Սաթի»-ի հայաստանեան կենտրոնում աշխատում են 15 պաշտօնեաներ:

«Անդրէ» երշիկի գործարանը, իր անկախ տնօրինութիւնն ունի, որում կարելոր դեր ունեն մաւր հայերը: Այս գործարանում աշխատում են մօտաւորապէս 100 հոգի: «Թաւանգա» ընկերութեան մէջ, որը շատ սահմանափակ կերպով առեւտրական աշխատանքներ ունի Հայաստանի հետ, իրավիճակը նոյնն է:

Հայաստանում «Մասիսաւան» ընկերութիւնը նոյնպէս պատկանում է ինձ, որի 14300 ք.մ. տարածքն երեւանի քաղաքապետարանից աճուրդի մէջ գնեցի: Այդ

տարածքում 75 յարկաբաժիններ կառուցեցինք եւ 8 առանձնատներ: Իմ գործընկերոջ մահւան պատճառով շինարարութիւնը երկարածուեց, բայց արդիւնքը փայլուն ստացւեց: 56 յարկաբաժին եւ 5 առանձնատներ արդէն յանձնուել են գնողներին: Այդ գործում «Մասիսաւան» ընկերութիւնը մօտ 3 միլիոն ԱՄՆ դոլար Հայաստանի կառավարութեան հարկ է վճարել եւ նորից էլ պիտի վճարի: Հայաստանի հարկային տեսչութեան յայտարարութեան համաձայն, «Մասիսաւան»-ը երկրի առաջին 1000 հարկատուների մէջ 500-րդ տեղն է գրաւում: Դրանից բացի, երեք տարի, հարիւրաւոր հայ աշխատաւորներ իրենց համար աշխատանք են ունեցել եւ աւելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար տարադրան է ներմուծել երկիր:

«Հայ դպրոց» հիմնադրանք, որ ուղղակի իմ հսկողութեան տակ է աշխատում եւ ունի իր տնօրէնը, մինչ այսօր կարողացել է Հայաստանի սահմանամերձ գիւղերում, 20 հազար աշակերտների նոր աթոռ-սեղան ու գրատախտակ տրամադրել:

1993 թւականին, Մաջիդիէ թաղամասում կառուցել եւ ազգային Առաջնորդարանին նվիրել եմ «Ալմաստ եւ Անդրէ Ահարոնեան» մանկապարտէզը: Մեծ դերակատարութիւն են ունեցել Մեղրիի կամուրջի կառուցման մէջ: Վերակառուցել են 1000 աշակերտանոց 136-րդ դպրոցը, որն ամբողջովին հրդեհուել էր:

Վերանորոգել եմ Հայաստանի բնապահպանութեան թանգարանը:

Հայաստանում եւ Թեհրանում ունեցել եմ տասնեակ ուսանող սաներ եւ վճարել եմ նրանց ուսման տարեկան ծախսերը:

Պարսիկ միջավայրը, 32 տարի է ինձ ճանաչում են եւ իմ անունով

երդուում: Հիմնադիր անդամն են եղել Իրան-Հայաստան Առևտրական պալատի, որով մեծ դեր են ունեցել Իրան-Հայաստան առևտրի ասպարեզում: Մինչև օրս այդ հաստատութեան օգտագործած գրասենեակն իր բոլոր յարմարութիւններով, անվճար ես են տրամադրել: Ինձ մօտից ճանաչում են առևտրի նախարար պրն. Ղազանֆարին, «Ջահադէ Քեշաւարզի» նախարար պրն. Ջալալին, ինչպէս նաեւ Իրանի կենտրոնական մարզի նահանգապետը:

Երբ Հայաստանից պետական հիւրեր են լինում, ինձ էլ ընթրիքի կամ ճաշի են հրաւիրում: Մեծ յարգանք ունի իմ հանդէպ Իրանի առևտրական պալատի նախագահ պրն. Նահաւանդեանը: Անցեալ մէկ ամսում, երկու անգամ ինձ հրաւիրել են նախագահի գրասենեակ, նրա տնտեսութեան խորհրդատու՝ Աղամոհամադիի հետ հանդիպելու համար:

Հայաստանում նախագահից սկսած մինչև վարչապետն ու նախարարները ինձ ճանաչում ու յար-

գում են. ոչ թէ իմ ֆիզիկական անձի համար, այլ իմ տարած աշխատանքների համար:

Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը միշտ ինձ գնահատել է հայրական աղօթքներով եւ իր 60-րդ տարեդարձի եւ գործունեութեան 12-րդ տարւայ տօնակատարութեանը, միակ իրանահայն էի, որ պաշտօնական հրաւեր ունէի:

Իսկ դուք ի՞նչ փաստի հիման վրայ էք համարձակում ինձ մեղադրել դրամաշորթութեան մէջ: Բան չունեմ ասելու բացի այն, որ ամօթ ձեզ: Հազար ամօթ:

Գիտեմ, որ այս կոմենտների հարցում «Ալիք»-ը դեր չի ունեցել, բայց զարմանում եմ, որ նրանք «Հայելի» սայթը յանձնել են մի երիտասարդ եւ կրթած անձնատրութեան, որ իր անպատասխանատու մօտեցումով, ուն ցանկանում է վիրաւորում է. մի անձնատրութեան, որ ոչ մի փորձառութիւն չունի քաղաքական եւ համայնքային հարցերում:

«Ալիք»-ի 80-ամեայ պատմութեան մէջ, գործում է երեք դարւայ

մտածելակերպ: 19-րդ դարւայ վերջում կազմել է Հ.Յ.Դ. կուսակցութիւնը բոլորովին տարբեր մի քաղաքական միջավայրում: 20-րդ դարը հայ ժողովրդի համար մի ողբերգալի դար էր, որն ունի իր դառը պատմութիւնը եւ բոլոր գաղափարախօսութիւններն էլ ազդած են այդ դարւայ տարբեր խնդիրներից: Սակայն 21-րդ դարը բոլորովին տարբեր մթնոլորտ է: Արդէն ունենք ազատ եւ անկախ Հայաստան: Մենք հայերս, պիտի միայն մի թիրախ ունենանք. դա է՝ պահել ու պաշտպանել ազատ Հայաստանը: Դուք չէք կարող Հայաստան-սփիւռքի մասին նախկին դարերի լոզունգներով ու պատմութիւնով զարգանալ: Թողէք մեր հայ երիտասարդ սերունդը ինքը մտածի ժամանակակից աշխարհի դրածքով: Թող նա յարգանք, սէր եւ մտերմութիւն տարածի հայ ժողովրդի մէջ եւ կառուցի նոր սփիւռքն ու նոր Հայաստանը եւ դուք էլ անվախ անցեալը պիտի յանձնէք պատմութեան գիրկը:

## ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

### ՊԼՈՒԲԱԼ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՈՐԵԷԷ ԱՆԿՈՒՄ ԱՆՊԱՅՄԱՆՈՐԵՆ ԿԱԶԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

Կատարական «Ալ Ջազիրա» հեռուստաընկերութեան անգլերէն հեռարձակման Նոյեմբերի 26-ի «Եւրօգօտու խնդիրների ազդեցութիւնները» հաղորդման հիւրն էր Հայաստանի նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը: Ստորեւ ներկայացւած է հաղորդավար Քամալ Սանտամարիայի եւ Վարդան Օսկանեանի զրոյցի հայերէն թարգմանութիւնից մի հատւած:

-Moody's-ն այս շաբաթ իջեցրեց Հայաստանի վարկանիշի կանխատեսումը՝ այն գնահատելով բացասական: Ի՞նչ էք կարծում՝ սա Հայաստանի տնտեսութեա՞ն խնդիրներով է պայմանաւորւած, թէ՞ Եւրոպայի եւ Ռուսաստանի տնտեսութիւնների:

-Կարծում եմ՝ վերջինների: Հայաստանի տնտեսութիւնը մեծապէս կրում է համաշխարհային տնտեսութեան ազդեցութիւնը: Թէեւ մեր երկիրը փոքր է, եւ եթէ 2009 թականի ճգնաժամը կարող է որեւէ ցուցիչ լինել, կարծում եմ՝ զլոբալ տնտեսութեան որեւէ նոր անկում կամ ճգնաժամ անպայմանօրէն կազդի Հայաստանի վրայ: Եւ քանի որ այս անգամ կարծես թէ հա-

մաշխարհային տնտեսութեան անկման աղբիւրը լինելու է Եւրոպան, Հայաստանի վրայ այդ ազդեցութիւնն էլ աւելի ուղղակի կը լինի, քանզի Եւրամիութիւնը Հայաստանի ամենախոշոր առևտրային գործընկերն է: Հայաստանը մետաղներ, յղկւած աղամանդներ է արտահանում Գերմանիա, Բուլղարիա եւ Բելգիա: Ազդեցութեան միւս ուղին Ռուսաստանն է, որը Հայաստանի երկրորդ խոշոր առևտրային գործընկերն է, Հայաստանում ամենամեծ ներդրողը եւ Հայաստան եկող դրամական փոխանցումների 75%-ի աղբիւրը: Հայաստանը Ռուսաստան արտահանում է հիմնականում գիւղատնտեսական ապրանքներ, հումք եւ վերամշակւած ապրանքներ: Համաշխարհային տնտեսութեան որեւէ անկում անպայմանօրէն կազդի Ռուսաստանի վրայ՝ փոխելով այդ տարրերն ու գործօնները եւ հետեւաբար ազդելով նաեւ Հայաստանի տնտեսութեան վրայ: Կարծում եմ՝ Moody's-ի որոշումը պայմանաւորւած էր այս հանգամանքներով:

# Ն. ԶՈՒՂԱՅԻ «ՀԱՄՎԱՐ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ (1980-1996)

Նիկիտ Սիրզայեան



Իրանի յեղափոխութիւնից յետոյ, Ն.Զուղայուն եւ Շահինշահրուն թափ առաւ մշակութային ինքնաբոլխ խմբերի ստեղծումը եւ դա անմիջական հետեւանքն էր թագաւորական վարչակարգի ժամանակայ քաղաքական ճնշումների, որը իրագործոււմ էր մեր համայնքում, որոշ «ազգայինների» հակաժողովրդական քաղաքականութեամբ եւ կեցւածքով: Այդ մշակութային միաւորներից մէկն էր «Համվար» թատերախումբը, որը զեղչւել է «Ն. Զուղայի թատրոնը» գրքից, որի հեղինակն է պրն. Լ.Գ.Մինասեանը:

Ցաւօք, իրանահայ մամուլը, այնպէս որ պէտք է, չի անդրադարձել նրանց, բայց պէտք է խոստովանել, որ նրանք վայելել են մեծ ժողովրդականութիւն: Թատերախումբ ստեղծելու միտքը 1980 թականին ծագեց մի քանի երիտասարդների մտքում, որ դրա միջոցով կարողանան քարոզչական աշխատանքներ տանել: Որոշւեց, որ միայն կոմեդի պիեսներ բեմադրեն եւ գրեթէ բոլոր պիեսներն որ ընտրոււմ էին, կամ իրենք էին

	Ներկայացումներ	Վայր
1980թ.	Հոգաբարձուն	Խոյզան գիղ
1982թ.	//	Ի.Ա.Մ.Մ. Ն.Զուղա
1981թ.	Բժիշկը	Ղարդուն գիղ
1982թ.	Մանուշի հարսանիքը եւ Աղան ու իր սուրճը	Ղարդուն եւ Խոյզան
1983թ.	Մարդասպանութիւն	Ի.Ա.Մ.Մ. եւ Շահինշահր
1984թ.	Դասարան (հեղ. Ա.Մաթեան) Ասիացի սափրիչ եւ Բուժարան	Ի.Ա.Մ.Մ., «Սանահին» միութիւն, Թեհրան 7 գիշեր
1983թ.	Դմի վաճառական	Շահինշահր
1984թ.	Ատատէք /Թոշակ/	Ի.Ա.Մ.Մ.
1983թ.	Բժիշկը	Շահինշահր
1985թ.	Կօշկակար, Քաղաքավարութեան վնասները (Յ.Պարոնեան) «Արարատ», Ն.Զուղա	«Սանահին» միութիւն, Թեհրան
1989թ.	Թիւ 5 խելագար	«Սանահին» միութիւն, Թեհրան
1986թ.	(Համբարձում-Վարդավառ) 60-ամեայ փեսացուն	Ղարդուն
1996թ.	Դմի վաճառականը, Ատատէք	«Արարատ», Շահինշահր եւ Ն.Զուղա
1986թ.	Ամերիկացի փեսացուն	«Սանահին» միութիւն, Թեհրան
1987թ.	PUNK-ը, 60-ամեայ փեսացուն	«Սանահին» միութիւն, Թեհրան

գրում, եւ կամ ամբողջութեամբ բարբառը փոխում էին Փերիայի ու Զուղայի բարբառով եւ աշխատում էին համայնքում այդ օրերի տեղի ունեցած անցուդարձը եւ

լուրերը մտցնել բեմադրութեան մէջ: Փորձերը ամբողջութեամբ կատարոււմ էին խաղացողների տնտրում, սկզբնական շրջանում բե-





«Ամերիկացի փեսացու»

մադրութեան համար բեմ եւ վայր չունենալու պատճառով, որոշում են բեմադրութիւնները տարին երկու անգամ բեմադրել գիւղերում բացօթեայ առանց որեւէ դէքորի, բայց զգեստաւորած եւ գրիմով, Յամբարձում եւ Վարդավառ տօների ժամանակ գրեթէ Ն.Ջուլայի ժողովրդի 80-ից 90-տոկոսը այդ օրերին այցելում էին Փերիայի Խոյզան եւ Ղարղուն գիւղերը, եւ հէնց դրա համար էլ որոշեցին խմբի անունը դնել «Համվար», Յամբարձում-Վարդավառ-ի երեք սկզբնական տառերով, «համվար» բառը Փերիայի բարբառով նշանակում է «դանդաղ»:

Թատերախումբը շատ շուտ իր տեղը բացեց Ջուլայի ժողովրդի սրտում, յատկապէս Սաքօ Մարկոսեանի հնուտ խաղարկութեան միջոցով: Նկատենք, որ ամէն մի բեմադրութիւնից յետոյ, ամիսներ բեմադրութեան որոշ բառերը փողոցում եւ տներում հնչում էին ժո-



«Մարդասպանութիւն», ԻԱՄՄ

ղովրդի շուրթերից: Բացի գիւղերից, խումբը առաջինն էր, որ Ի.Ա.Ս.Ս-ի բեմում բեմադրեց Ա.Մաթեանի «Ամերիկացի փեսացուն», Ռազմիկ Մարկոսեանի բեմադրութեամբ: Խումբը երկու անգամ խաղացել է Թեհրանի «Սանահին» միութեան բեմում, յետոյ խմբի անունը փոխեց «Րաֆֆի» անունով եւ այդ անւան տակ բե-

մադրութիւններ ունեցան Ն.Ջուլա եւ Շահինշահր քաղաքների «Արարատ» միութիւններում: 1996թ. մօտ 16 տարի աշխատելուց յետոյ դադարեցեց խմբի գործունէութիւնը: Խմբի բեմադրութիւններից նկարահանել են 3 բեմադրութիւն:



կոսեան, Արարատ Դիլանչեան, Արտուշ Դիլանչեան, Անուշաւան Դիլանչեան, Արայիկ Դիլանչեան, Սարօ Ծառուկեան, Արթինէ Թորոսեան:

Թարգմանչական աշխատանք: Սքառլէթ Սահակեան

Զգեստաւորում: Մառիթա Վարդանեան

Բեմադրիչ: Ռազմիկ Մարկոսեան եւ Ռուբէն Իսայեան  
Հիմնադիր: Ռազմիկ Մարկոսեան

Վերջում պէտք է աւելացնել, որ որոշ պիեսների բեմականացմանը իր օժանդակութիւնն է բերել Ազատ Մաթեանը, եւ դիմայարդարման գործում ժամանէ Զանջիկեանը (Տէր Սուքիազեան) եւ Պերճուհի Խուրավերդեանը (Միրզայեան):

Անկասկած «Համվար» թատերախումբը Ն.Զուլայի մշակութային երկնականարում որպէս ասուլսի պահ փայլատակեց եւ անցաւ պատմութեան գիրկը, զարդարելով Ն.Զուլայի թատրոնի 125-ամեայ պատւանդանը:

«Դասարան»



Երկու պատկեր «Աղան եւ իր սուրճը» ներկայացումից, Խոյզան գիւղ

**Դերասանների ցանկ**

Ռազմիկ Մարկոսեան, Ռուբէն Իսայեան, Սարօ Մարկոսեան, Ռէնոնդ Մարկոսեան, Ռազմիկ Ղեւոնդեան, Նոյէլ Սկրտչեան, Ռուբիկ Քեչիչեան, Արտուշ Ղազարեան, Էդիկ Անջուլեան, Գեւորգ Խաչիկեան, Վիոլէթ Սկրտչեան, Սարօ Վարդանեան, Մառիթա Վարդանեան, Ռիմա Յովսէփեան, Ժաննէթ Քեչիչեան, Սիրվարդ Մար-



# Վ Ե Ր Զ

## Ա Ի Տ Օ Վ Թ Ա Ր Ն Ե Ր Ի Ն



Արդեն մի քանի ժամանակ է, ինչ աշխարհի ամենասիրած որոնող կայքէջը՝ Google-ը, աշխատում է մի իւրայատուկ ատոմեքենայի վրայ, որը վարորդի կարիք չունի: Ըստ Google-ի՝ արդեն այս նոր տեսակի մեքենաները անց են կացնում իրենց փորձնական փուլը: Այդ ընթացքում այս մեքենաներին յաջողել է անցնել ԱՄՆ-ի յայտնի Գոլդ-Գեյթ կանուրջի վրայով:

Google-ի գլխավոր ինժեներներից մեկը յատնել է թե իրենց ատոմեքենան արդեն 225 հազար կիլոմետր ծանապարհ է անցել եւ այս ամբողջ ընթացքում գրանցել է ընդամենը մեկ ատոմեքենա: Նա ասելացրել է, որ ներկայումս երթևեկութեան գերագոյն հարցը անվտանգութիւնն է եւ քնելը: Տարեկան 1.2 մլն մարդ զոհուում է ատոմեքենայի հետեւանքով, ուստի հարկավոր է ինչքան շուտ մի ելք

գտնել: Ըստ նրա՝ այս նոր տեսակի ատոմեքենաները, որոնց մէջ տեղադրած են բարձր տեխնոլոգիաներ, կարող են լիովին փոխարինել ներկայ մեքենաներին նազեցնելով ատոմեքենայի այդ անհաւատալի թիւը:

Արդեն մի քանի տարի է, ինչ Google ընկերութիւնը ընդլայնել է իր գործունէութեան ոլորտը եւ մուտք է գործել բիզնեսի աշխարհ: Ըստ վերջին տեղեկութիւնների այս ընկերութիւնը իր նոր համակարգչային ծրագրերով, որոնցից կարելի է նշել Google-Map եւ Google-Street-ը, կարողացել է զգալի յաջողութիւնների հասնել իր ոչ մասնագիտական ոլորտներում: Ըստ Google-ի մասնագետների՝ նրանց բուն նպատակն է՝ այս ծրագիրն իրականացնելով, նազեցնել ատոմեքենայից մահաւան դէպքերի թիւը, ինչպէս նաեւ մի կերպ օգնել օդի մաքրութեանը,

քանի որ այս նոր տեսակի ատոմեքենաները ածխածին չեն արտանետում: Պէտք է ասելացնել, որ վերջերս Google-ը մօտ 2.8 միլիարդ դոլար էր յատկացրել մաքուր էներգիաների ծրագրին:

Յետեւեալ ծրագիրը համարում է Google-ի գաղտնի ծրագրերից մեկը, սակայն նրա փորձնական բաժինը տեղի է ունենում ԱՄՆ-ի եւ մասնաւորապէս Սան-Ֆրանսիսկոյի փողոցներում: Այս նոր մեքենաներում ինչպէս նշեց տեղադրած են մի այնպիսի համակարգ, որը կարողանում է ամեն պահ, համապատասխան որոշում կայացնել: Մասնագետները իհարկէ նշել են, թէ առայժմս մեր հնարաւորութիւնները շատ սահմանփակ են այնպիսի ատոմեքենաները զանգւածային արտադրութեան յանձնել, սակայն նրանք, ովքեր աշխատում են այս ծրագրի վրայ, հաւատացած են, որ այն



կարող է յեղաշրջել մեր կեանքը, այնքան, որքան տեղի ունեցավ միջազգային համացանցի ստեղծումից յետոյ: Այս ծրագրի մտայղացումը «Ստանֆորդ» համալսարանի փորձատեղի 43-ամեայ տնօրէն՝ Սեբաստիան Տերոնին է պատկանում: Նա, ով այսօր Google-ի մասնագտներից մէկն է, սրանից առաջ էլ կարողացել էր ստեղծել Street-View Mapping ծրագիրը: Նա վստահ է, որ այս ծրագիրը, որն ըստ մասնագէտների լաւագոյն դէպքում կիրականանայ առնւազն 8 տարի յետոյ, մեծապէս կը բարելաւի մեր հասարակական կեանքը՝ պակսեցնելով անօվթարից տուժածների թիւը, միաժամանակ ծառայելով բնապահպանման ծրագրերին:

*Թարգմանեց՝  
Արման Տ. Ստեփանեանը*



## ՀԱՅ ԿԱՆԱՅՔ ՌՈՒՄ ԼՈՒ- ՍԱՆԿԱՐՉԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Սերգեյ Միխայիլովիչ Պրոկուդին-Գորսկիի (1863-1944) գունաւոր լուսանկարչութեան նախահայրերից է, որը 1900-ականներին ճամբորդել է ողջ ռուսական կայսրութեան տարածքով եւ լուսանկարել զանազան ազգութիւնների բարքերը, կենցաղը եւ տարազը: Այսօրւայ թուրքիայի հիւսիս-արեւելքում Արդւին շրջանում, նա լուսանկարել է նաեւ հայ կանանց՝ իրենց ազգային տարազով: Մինչ շատ մշակոյթներում ասեղնագործ ու ձեռագործ նախշերը օգտագործւում էին միայն բարձր դասակարգին պատկանող կանանց զգեստների վրայ, այդպէս չէր հայերի մօտ: Իւրաքանչիւր հայ աղջկայ հագուստը, ինչպէս երեւում է նաեւ պատկերներում, զարդարւած էր ասեղնագործով:





**ԱՄԱՆՈՐԻ ԹԽԻԱԾՔ**

**Բաղադրույթիւն**

կարագ (հալած)	3/4 թէյի բաժակ
շաքարաւազ	1 թէյի բաժակ
ծու	2 հատ
վանիլ	1 թ.գ.
ալիւր	2.5 թէյի բաժակ
բէյքինգ փաուլըր	1 թ.գ.
աղ	1/4 թ.գ.
ելակի վարենի	6 ճ.գ.
գունաւոր շաքարի փոշի	1/4 թէյի բաժակ



Պատրաստման տեւողութիւն: 30 րոպէ  
 Թխելու տեւողութիւն: 15 րոպէ  
 Ընդհանուր տեւողութիւն: 4.5 ժամ  
 Կալերիա: 158  
 ճարպ: 6.3 գրամ  
 Կոլեստերոլ: 33 միլիգրամ

## Պատրաստման եղանակ

Մի մեծ սափորի մէջ կարագն ու շաքարաւազը հարել մինչեւ կրեմի ձեւ ստանայ, ապա աւելացնել ձուն ու վանիլը եւ դարձեալ լաւ հարել, վերջում ալիւրը, աղն ու բէյքինգ փաուդը մաղելով լցնել նրանց վրայ, եւ խմորը լաւ հունցելուց յետոյ 3 ժամ թողնել սառնարանում:

Ջեռոցը 175 սանտիգրադ (350 Ֆարնհայթ) տաքացնել: Թխւածքի թղթերը իւղել, իսկ մատուցարանում ալիւր շաղ տալ: Այս բլիթների պատրաստման համար անհրաժեշտ են մեծ եւ փոքր երկու աստղածեւ կաղապարներ:

Խմորը գրտնակով շուրջ 3մմ. հաստութեամբ բացել եւ մեծ աստղածեւ կաղապարով կտրատել, ապա փոքր կաղապարով նրանցից կէսի մէջտեղը աստղածեւ հանել ու գունաւոր շաքարով ծածկել: Երկու տեսակ աստղերը շարել իւղաթղթերի վրայ ջեռոցի մատուցարանում եւ 6-8 րոպէ թողնել թխի: Պատրաստուած բլիթները թողնել սառչի եւ յետոյ լրիւ աստղերի վրայ քսել վարենին, իսկ միւս ծակած աստղերը դնել նրանց վրայ: Կարելի է ելակի վարենիի փոխարէն, բալի կամ որելէ այլ վարենի օգտագործել: Այս բլիթները կարող էք զարդարել գունաւոր ըսմարտիզներով:

## Բ Ա Ր Ի Ա Խ Ո Ր Ժ Ա Կ

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏՆՏԵՍՈՒՀՈՒՆ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

## Քաթրին Եաղուբի

Բոլոր հայ ընտանիքները, ըստ սովորութեան, Նոր տարին դիմաւորում են տան մաքրութեամբ: Այդ նկատառումով, այս համարում, ընտրել ենք մի քանի օգտակար խորհուրդներ մաքրութեան գործը աւելի հեշտ ու արագ կատարելու համար:

### Ապակի մաքրելու գաղտնիքները

- Ապակիներն աւելի լաւ է մաքրել ամպոտ օրերին, որովհետեւ արեւի ջերմութիւնը շատ արագ չորացնում է ապակի մաքրելու համար օգտագործուած հեղուկը եւ հետքեր թողնում նրա վրայ: Եղանակը շատ ցուրտ լինելու դէպքում եւս ապակի մաքրելը ճիշտ չէ, քանի որ դրսի եւ ներսի ջերմաստիճանի խիստ տարբերութիւնը կարող է ապակու փշուրելու պատճառ դառնալ, որը եւ վտանգաւոր է:

-Եթէ վերջացրել էք ապակի մաքրելու քիմիական հեղուկը, պէտք չէ անհանգստանալ, կարող էք ինքներդ տանը պատրաստել այն: Այդ նպատակով բաւական է երկու բաժակ ջրին խառնել կէս բաժակ ալկոհոլ ու մէկ թէյի գթալ աման լացնելու հեղուկ, եւ խառնուրդով մաքրել մնացած ապակիները:

- Ապակի մաքրելու համար մի սափորի մէջ լցնել տաք ջուր, 2 կամ 3 ճաշի գթալ թարմ լիմոնի հիւթ, եւ օրաթերթի թղթերով տրորել ապակիները:

-Այն ապակիներն ինչ անձրեւի թողած սպիտակ նստածքով ծածկել են, կարող էք մաքրել տաք ջրին խառնած քացախով:

-Եթէ հայելու կամ ապակու վրայ գիծ է ընկել, դա էլ իր ճարն ունի. դրա համար կարելի է օգտագործել հասարակ ատամի մածուկը. մի քիչ ատամի մածուկ քսել գիծ ընկած տեղը եւ մի քանի վայրկեան յետոյ մաքրել:

- Եթէ ապակու կամ հայելու վրայ յայտնւել են մոծակի կամ ճանճի հետքեր, այն մաքրելու համար կարող էք սառը թէյից օգտուել, շորը թաթախել թէյի մէջ ու քսել ապակուն կամ հայելուն:

-Ապակու անկիւններն ընդհանրապէս դժուար է մաքրել, դրա համար կարող էք օգտուել հին խոզանակից: Այն թաթախել ջրի ու վայթեքսի (ժաւել) խառնուրդով եւ այդ սեւացած անկիւնները մաքրել:

### Ջեշտացնենք պատերի մաքրումը

Եթէ ձեր տան պատերը իւղաներկ են, կարող էք դրանք հեշտութեամբ մաքրել ջրով բացւած 1/4 գթալ սոդայի փոշու եւ կէս թէյի բաժակ քացախի խառնուրդով:

-Իւղամատիտների հետքերը պատերի վրայ կարելի է մաքրել մանկական քսուկ իւղով ու բամբակով: Բամբակը թաթախել այդ իւղի մէջ եւ տրորել ներկած հատւածները:

- Մատիտի հետքերը պատի վրայից մաքրելու համար, բաւական է մի հին խոզանակի վրայ քսել ատամի մածուկ եւ քսել նրանց վրայ:



## ՄԽԻԹԱՐԵԱՆԸ ԴԱՐՁԱՒ 12000-ՐԴ ԳՈՒԻ ՀԵՂԻՆԱԿԸ


Արման Տ.Ստեփանյան



35 գնդակ: Այդ ժամանակաընթացքում նա 3 անգամ դարձել է Հայաստանի Բարձրագույն խմբի ոսկե մեդալակիր, 1 անգամ արժանացել է Հայաստանի Անկախության Գալաթին, եւ 2 անգամ Յակոբ Տոնոյեանի անվան Սուպերգալաթին: Փիւնիկում եւ ազգային հաւաքականներում իր յաջող ելույթների համար Մխիթարեանը արժ ա -

Դոնեցկի Շախտիորի եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Ուկրաինայի Պրեմիեր լիգայի 20-րդ տուրում գրաւելով Կրիւբասի դարպասը, դարձել է Ուկրաինայի առաջնութեան 12,000-րդ գոլի հեղինակը: Նշենք, որ հայազգի ֆուտբոլիստը երրորդ խաղն է, որ անընդմէջ դառնում է գոլի հեղինակ: Յիշեցնենք, որ վերը նշած խաղում Շախտիորը հիւրընկալւելիս ջախջախել է Կրիւբասին 4:0 հաշւով:

Հենրիխ Համլետի Մխիթարեանը ծնւել է 1989 թ. Յունւարի 21-ին, Երեւան քաղաքում: Մխիթարեանը իր կարիերան սկսել է Երեւանի Փիւնիկում, որտեղ նա անց է կացրել երեք ու կէս տարի՝ խաղալով 89 խաղ, խփելով



նացաւ 2009 թւականի Հայաստանի լաւագոյն ֆուտբոլիստ տիտղոսին: 2009 թւականի Յունիսին նա 3 տարւայ պայմանագիր կնքեց Դոնեցկի Մետալուրգեշ ֆուտբոլային ակումբի հետ: Սակայն նա ընդամենը մի տարի խաղաց այդ ակումբում, քանի որ 2010 թւականի Օգոստոսի 30-ին Հենրիխը 5 տարւայ պայմանագիր կնքեց Դոնեցկի Շախտիորի հետ: Դոնեցկի Մետալուրգը Հենրիխի տրանսֆերի դիմաց ստացաւ 7.5 մլն. դոլար: Միսիթաբեանը չնայած իր տարիքին արդէն նաեւ համարուում է Հայաստանի ֆուտբոլի ազգային հաւաքականի գերազանց դէմքերից մէկը: Իսկ ազգային հաւաքականից առաջ նա խաղացել է Հայաստանի՝ մինչեւ 17, մինչեւ 19 եւ մինչեւ 21 տարեկան հաւաքականներում: Նա ազգային հաւաքականի համար խաղացել է 27 միջազգային մրցութիւններում, որի առաջին անգամը դա 2007 թւականի Յունւարի 14-ին Պանամայի դիմաց էր: Ինչպէս նաեւ պէտք է աւելացնել թէ նրան 8 անգամ յաջողել է գոլ խփել, որի առաջին անգամը 2009 թւականի Մարտի 28-ին Հայաստան-Էստոնիա խաղի ժամանակ էր: Այդ խաղում նրա գոլի շնորհիւ Հայաստանի հաւաքականը փրկւեց իր սեփական յարկում պարտելուց:

## ՌՈՋԵՐԸ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ Է ՂԵՆԼ

Tennistimes.com-ի տեղեկացմամբ՝ աշխարհի երրորդ թեմիսիստ Ռոջեր Ֆեդերերը շւէյցարական Ալպերում 17.5 մլն. դոլար արժողութեամբ առանձնատուն է կառուցել: Այն գտնուում է Գրաուբինդեն լեռնային շրջանում՝ լճի հարեւանութեամբ, ներառում է 8000 ք.մ. հողատարածք: Այս տարածքը Ֆեդերերը դեռ 2008 թ.-ին էր ձեռք բերել, սակայն շինարարութիւնը սկսել էր 2010 թ.-ին: Այժմ թեմիսիստի կիցն ու երեխաները աւելի յարմարաւետ պայմաններում կապրեն, իսկ տանտէրը կը փորձի վերադարձնել այն

միջոցները, որ յատկացւել են առանձնատան կառուցմանը:




## ՈՍԿԷ ԱՂԲԱՄԱՆԸ ՀԱՍԱՒ ՄԻԼԻՏՈՅԻՆ

Ինտերի յարձակող Դիեգո Միլիտոն դարձել է 2011թ. Ոսկէ Աղբամանի մրցանակակիր: Այս մրցանակն ամէն տարի յանձնուում է Ա սերիայի վատագոյն ֆուտբոլիստին: Չնչին տարբերութեամբ արգենտինացին շրջանցել է Իւվենտուսի յարձակող Ամաուրիին, իսկ երրորդ տեղում է յայտնւել Ծեր Սինիորայի կիսապաշտպան Միլոշ Կրասիչը:

